

24.02.2014թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Ն. Բաղդասարյան (սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ):

Օրակարգի նախագծում չորս հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2012 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի վիճակագրության ամբիոնի ասիստենտ Ռ. Գևորգյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

2. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 3 (տարեկան), Ձև 3-ա (տարեկան), Ձև 8 (տարեկան), Ձև 33 (տարեկան), Ձև 37 (տարեկան) և Ձև 61^ա վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի մի շարք արձանագրային որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 210-Ն, 212-Ն, 213-Ն, 215-Ն և 216-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու» և ««Օգտակար հանաժոնների կորզումն արդյունահանման ժամանակ» Ձև 70-SU (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», ««Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» Ձև 01-ԵՈՒ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», ««Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» Ձև 01-ԵՈՒ (ետամյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», ««Օգտակար հանաժոնների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների և արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» Ձև 71-SU (տարեկան) և «Կենդանաբանական այգու գործունեության մասին» Ձև 1-կենդանաբանական այգի (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2012 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազան Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի վիճակագրության ամբիոնի ասիստենտ Ռ. Գևորգյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի վիճակագրության ամբիոնի ասիստենտ Ռ. Գևորգյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2012 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրատարակելու և այլ կարգով չտարածելու, պայմաններով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 3 (տարեկան), Ձև 3-ա (տարեկան), Ձև 8 (տարեկան), Ձև 33 (տարեկան), Ձև 37 (տարեկան) և Ձև 61^Գ վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի մի շարք արձանագրային որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Ձև 3 (տարեկան), Ձև 3-ա (տարեկան), Ձև 8 (տարեկան), Ձև 33 (տարեկան), Ձև 37 (տարեկան) և Ձև 61^Գ վարչական վիճակագրական հաշվետվության ձևերին և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2004 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 21, թիվ 23, թիվ 28, թիվ 38, թիվ 42 արձանագրային որոշումները:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 210-Ն, 212-Ն, 213-Ն, 215-Ն և 216-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու» և ««Օգտակար հանաժոնների կորզումն արդյունահանման ժամանակ» Ձև 70-SU (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», ««Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» Ձև 01-ԵՈԻ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», ««Երկրաբանական ուսումնասիրությունների մասին» Ձև 01-ԵՈԻ (եռամսյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության», ««Օգտակար հանաժոնների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների և արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» Ձև 71-SU (տարեկան) և

«Կենդանաբանական այգու գործունեության մասին» Ձև 1-կենդանաբանական այգի (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն.Բաղդասարյան/

Որոշեցին՝

հաստատել ներկայացված պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները համաձայն հավելվածների և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 210-Ն, 212-Ն, 213-Ն, 215-Ն և 216-Ն որոշումները:

/Անհատական/, /ստորագրել/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ